



16 June 2015

Եվրոպական խաղերի ընթացքում Եվրոպական դատարանը կայացրեց շրջադարձային վճիռ ընդդեմ Ադրբեջանի

Ադրբեջանում Եվրոպական խաղերի ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակեց իր վճիռը [«Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի»](#) գործով, որը բացառիկ նշանակություն ունի 27-ամյա դարաբաղյան հակամարտության ընթացքում տեղահանված եւ փախստականի կարգավիճակ ձեռք բերած ավելի քան մեկ միլիոն քաղաքացիների համար ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում:

[«Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի»](#) գործում, դատարանը համարեց, որ Ադրբեջանի իշխանությունները խախտել են դիմողի սեփականության իրավունքները, ով ստիպված է եղել հեռանալ իր տնից Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում: Այս գործը կարևոր նախադեպ կարող է հանդիսանալ նույն իրավիճակում գտնվող հազարավոր մարդկանց համար, որոնք կստանան որեւէ փոխհատուցման հնարավորություն:

Եվրոպական խաղերի ընթացքում, միջազգային ԶԼՄ-ների դրսևորած ուշադրության պայմաններում, լույս սփռվեց Ադրբեջանում քաղաքացիական հասարակության ճնշումների վրա, որոնց թվում են ավելի քան 100 իրավապաշտպանների, քաղաքական ակտիվիստների, լրագրողների եւ բլոգգերների բանտարկությունները:

Սարգսյանների ընտանիքը ՄԻԵԴ-ում ներկայացնում են [Իրավական ուղեցույց](#) հասարակական կազմակերպությունն ու Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնը ([EHRAC](#), [Միդլսեքսի համալսարան](#), Լոնդոն):

Պրոֆեսոր Ֆիլիպ Լիչը ասում է. «Ավելի քան մեկ միլիոն մարդ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում տեղահանվել են հակամարտության ընթացքում, եւ այս վճիռներն առավել կարևոր են, քանզի ապացուցում են երկու կառավարությունների պարտավորությունները՝ ապահովելու ներքին տեղահանված անձանց եւ փախստականների իրավունքների պաշտպանությունը: Հակամարտությունից 27 տարի անց, դատարանը բարձրաձայնում է, որ ժամանակն է դադարեցնելու թշնամական հոետորաբանությունն եւ հակամարտությունից տուժած մարդկանց պաշտպանելու գործում ակտիվ միջոցներ ձեռնարկել»:

Մինաս Սարգսյանը ծնվել էւ ապրել էր Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում: 1992թ-ին ադրբեջանական զինուժի ավերիչ ուժակոծությունների հետեւանքով իր ընտանիքի հետ նա հարկադրաբար լքել է իր տունը եւ տեղափոխվել Հայաստան: 2006թ Մինաս Սարգսյանը ՄԻԵԴ հայց էր ներկայացրել՝ իր ընտանիքի տեղահանության դեմ պաշտպանություն ակնկալելով՝ հիմնվելով սեփականության պաշտպանության Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի [1-ին արձանագրության 1-ին հոդվածի](#) (գույքային իրավունքների պաշտպանություն), ինչպես նաեւ [8-րդ հոդվածի](#) (անձնական եւ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք) վրա: Բացի այդ,



Գյուլիստանում գտնվող Սարգսյանների ազգականների գերեզմաններ այցելելու հնարավորության բացակայությունը նույնպես հանգեցրել է ՄԻԵԿ [8-րդ հոդվածի](#) խախտման: Այս գործում ՄԻԵԴ-ը նաև հաստատեց, որ Ադրբեջանը չի ստեղծել Սարգսյանների ընտանիքի սեփականության իրավունքի վերականգնման համապատասխան պայմաններ եւ չի տրամադրել արդյունավետ պաշտպանության միջոցներ ([13-րդ հոդված](#)):

2009թ.-ին Մինաս Սարգսյանի, այնուհետև 2014թ.-ին նրա տիկնոջ՝ Լենայի մահից հետո, նրանց դուստրն եւ որդին ճանաչվեցին գործով իրավահաջորդներ:

Նույն օրը ՄԻԵԴ-ը նաև վճիռ է կայացրեց [«Չիրագովն քնդդեմ Հայաստանի»](#) զուգահեռ գործով, որը վերաբերում է Լեոնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում տեղահանված ադրբեջանցի փախստականներին: Դատարանը որոշեց, որ Հայաստանը խախտել է ՄԻԵԿ-ի նույն հոդվածները՝ հոգուտ գործում ինը դիմողների: Դատավճիռները կայացան նույն օրը, երբ Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի նիստի ժամանակ ՄԱԿ-ում՝ ներքին տեղահանված անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Չալոկա Բեյանին ներկայացրեց իր տարեկան զեկույցը: Ենթադրվում է, որ Բեյանին անդրադարձել է նաև Լեոնային Ղարաբաղի հակամարտությանը: 2014թ. իր զեկույցում նա ասում է. [«Չլուծված հակամարտության խաղաղ կարգավորումը կարելու է Ադրբեջանում ավելի քան 20 տարի տևած, ներքին տեղահանումների ձգձգված խնդիրը շտկելու համար»](#) :

[«Սարգսյանն քնդդեմ Ադրբեջանի»](#) եւ [«Չիրագովն քնդդեմ Հայաստանի»](#) գործերն կարող են աշխուժացնել երկու երկրների միջև բանակցությունները հակամարտության քաղաքական կարգավորման շուրջ: Դատարանը իր վճռում նշեց. «Այն փաստը, որ խաղաղության բանակցություններն ընթացքի մեջ են, կառավարությանը չի ազատում այլ քայլեր ձեռնարկելուց. հատկապես, որ բանակցություններն երկար ժամանակ է, ինչ շարունակվում են:» Ինչպես նաև, դատարանը կոչ արեց Ադրբեջանի իշխանություններին ստեղծել մի մեխանիզմ, որը թույլ կտա տեղահանված անձանց վերականգնել իրենց սեփականության իրավունքը եւ ստանալ փոխհատուցում սեփական իրավունքների խախտման համար:

Նշումներ

[«Սարգսյանն քնդդեմ Ադրբեջանի»](#) եւ [«Չիրագովն քնդդեմ Հայաստանի»](#) գործերով որոշումները հրապարակվեցին հունիսի 16-ին, ժամը՝ 16:00-ին Ստրասբուրգում ՄԻԵԴ հանրային լսումների ժամանակ:

ՄԱԿ-ում՝ ներքին տեղահանված անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Չալոկա Բեյանիի զեկույցը կարող եք գտնել [այստեղ](#):